# «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ»-Ի ՆՎԵՐԸ

**Վերջերս Արցախում էր «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցչությունը: Արդեն 7-րդ տարին է, ինչ ընկերությունը բարեգործական ծրագիր է իրականացնում Արցախում՝ հանրակրթական դպրոցներին, ինչպես նաև մանկապարտեզներին և գիշերօթիկ հաստատություններին հատկացնելով մարզական, կենցաղային գույք, դասագրքեր, խաղալիքներ և այլ անհրաժեշտ իրեր: Երևան վերադառնալիս՝ ընկերության աշխատակիցները կանգ առան Բերձորում: Շրջանի 2 դպրոցների համար բերել էին հեռուստացույց, համակարգիչ, մարզական գույք:**



Մինչ այժմ «ՀայՌուսգազարդ»-ը մեր շրջանում նման ծրագիր չէր իրականացրել, և այդ իրողություն դարձավ այն բանից հետո, երբ ընկերս՝ գեղանկարիչ Նիկոլ Աղաբաբյանը ընկերության տնօրեն Հարությունյանին տեղեկացրել էր Հակի դպրոցին օժանդակելու մասին: Շրջանի կրթության բաժնում հանդիպեցի ընկերության ներկայացուցիչներին մարզագույք ու սարքավորումներ էին հանձնելիս: Տեխբաժնի գլխավոր մասնագետ Արտաշես Գաբրիելյանը տեղեկացրեց, որ այս անգամ իրենք օժանդակել են Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությանը, Քարվաճառի Վ. Սարոյանի անվ. թիվ 1 միջն., Շուշիի Խ. Աբովյանի անվ. թիվ 1 հիմնական, Մարտակերտի Վլ. Բալայանի անվ. թիվ 1 միջն. դպրոցներին: Մարտակերտում և Քարվաճառում նս բարեգործությունն առաջին անգամ է իրականացվել, և, այն լինելու է շարունակական: -Դպրոցների կարիքների մասին տեղեկանում ենք և աշխատում ենք հնարավորինս օգնել: Հույս ունենք, որ եկող տարի շրջանի այլ դպրոցների նս հնարավոր կլինի օժանդակել -ասաց Ա. Գաբրիելյանը: -Նշեց նաև, որ նման օգնություն ցուցաբերում են Հայաստանի հանրապետությունում: Ինչ խոսք մեր շրջանի, ինչու չէ՝ հանրապետության բոլոր հանրակրթական հաստատություններն էլ ունեն նման գույքի կարիք, և շատ կարևոր է, որ կան «ՀայՌուսգազարդ»-ի նման ընկերություններ, որոնք տարեցտարի լրացնում են պակասը: Հուսանք՝ այլ հարուստ կազմակերպություններ նույնպես կրթօջախներին կօգնեն նման հարցերում:

***Զոհրաբ Լզբոյան***